Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Կատարորոշական վարույթը կասեցնելու մասին

04.11.2022թ. ք.Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող արդարադատության մայոր Արմեն Թորոսյանս ուսումնասիրելով 03.12.2022թ. վերսկսված թիվ 06441052 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 06.07.2020թ. տրված թիվ ԵԴ/39474/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է՝ ԱԱրշակ Արմենի Մաթևոսյանից հօգուտ Հայցվոր <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ի բռնագանձել 527.012 ՀՀ դրամ, որից՝ վարկի պարտք՝ 518.656 ՀՀ դրամ, տոկոսների պարտքը՝ 4.043 ՀՀ դրամ, տույժերի պարտքը՝ 1.013 ՀՀ դրամ, հաշվի սպասարկման վճարի պարտք՝ 3.300 ՀՀ դրամ:

Սկսած 30.10.2019թ.-ից վարկի ժամկետանց մնացորդի՝ 525.999 ՀՀ դրամ գումարի վրա հաշվարկել օրական 0.13 տոկոսի չափով տույժ, բայց ոչ ավելի քան տվյալ պահին առկա վարկի մնացորդը և Արշակ Արմենի Մաթևոսյանից բռնագանձել հօգուտ <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ի:

Սկսած 30.10.2019թ. մինչև պարտավորության փաստացի մարումը ամսական 3.300 ՀՀ դրամ՝ որպես հաշվի սպասարկման ամսական վճարը Արշակ Արմենի Մաթևոսյանից բռնագանձել հօգուտ <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ի, բայց ոչ ավել 301 օրից:

Արշակ Արմենի Մաթևոսյանից հօգուտ <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ բռնագանձել 10.550 ՀՀ դրամ՝ որպես Հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5%-ի չափով ՀՀ դրամ գումար, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է կիրառվել TOYOTA CAMRY 2.5 I մակնիշի նույնականացման համար / VIN 4T4BF3EK6BR186322 / 02 FN 001 պ/հ ավտոմեքենայի վրա, որը <<Ամինտաս Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից գնահատվել է 4.400.000 ՀՀ դրամ, որի մեկնարկային գին կազմում է 3.300.000 ՀՀ դրամ, պարտապաններին պատկանող բռնագանձման ենթակա այլ գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել:

Միաժամանակ պարզվել է, որ պարտապանի անվամբ ՀԿԱ ծառայությունում կան հարուցված բռնագանձման վերաբերյալ բազմաթիվ այլ կատարողական վարույթներ, որոնց բռնագանձման ենթակա գումարը կազմում է շուրջ 7.000.000 ՀՀ դրամ:

Իրականացված կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ պարտապանին պատկանող գույը նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկի և ավել չափով բավարար չէ պահանջատիրոջ պահանջների կատարմանը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 հոդվածով և 37 հոդվածի 8-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել թիվ ԵԴ/39474/02/19 կատարողական թերթի հիման վրա՝ 03.12.2022թ. վերսկսված թիվ 06441052 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից երկամսյա ժամկետոքում:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ՝ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Digitally signed by
TOROSYAN ARMEN
2501820150
Date: 2022.11.04
10:10:06 AMT